

բուժեանց, որք անոնց դորձադրութեանը պիտի հսկեն :

«Արեւելի պետական անձն» «յա-նուն» և ի նպատակ Հայոց ուղարկու-թիւնը կը հրաւիրէ այս միջոցաւորին պարտականութեան վրայ, և կը խնդ-րէ որ մեռած տառին կենդանու-թիւն տրուի : Մեք ալ, վեհ. Սու-թեանին և թուրք տէրութեան շա-հուն համար է որ Օսմանեան նախա-րարաց զգացնել տալ կուզեմք Պէր-լինի գաղտնաբերով իրենց ստանձնած այս պարտականութիւնը գործողութե-լու հարկն : Այս բանն երկու կերպիւ միայն կրնայ լինիլ. կամ՝ հայկական դատաւայ վարչութիւնն ապակեղ-րոնացնելով, կամ՝ ինքնօրինութիւն տալով Հայաստանի : Մեք այս եր-կու դրութեանց առաջինն՝ այն է ապակեղրոնացումն՝ առեւի համա-ձայն կը կարծեմք թէ՛ ահաբեկեան և թէ՛ նոյն ինքն Հայոց շահուն, և բնաւ չեմք մասնակցիր «Արեւելի պետական անձն» այն համաձայնը թէ թուրքիոյ նախարարը երբեք չպիտի ճանչնայ ապակեղրոնացման հարկը :

«Պետութիւն մը չկրնար կենալ ի միտս իւր բաղադրիչ տարրերաց, ինչպէս որ մարդկային մարմինը չկը-նար ապրիլ ի միտս իւր անդամաց : Արդ, մինչև ցարդ թուրքիոյ մէջ ի դարձ դրութեան կեդրոնացումը դա-ւառաց բոլոր կենսական տրիւնը դէպ ի մայրաքաղաքն հասնելու տա-լու դիտաւորութեամբ հաստատուած լինիլ կը թուի, այնպէս որ այդ կեն-սական տրեան ոչ մէկ կաթիլը դա-ւառաց երակներուն մէջ չըլլիր կեն-դանութիւն տալով անոնց : Արդ ինչ-քնն այս է որ այդ դաւառաց կեան-քնն արագապէս կը նուաղի, և երբ անգամ մը կեանքը մարմնոյն ծայրե-րէն անհետացած է, մահը շուտ կը հասնի նաեւ արտին : Այսպիսի վիճ-ճանի մ'առաջին առնուել տակաւին հնար է արագ և տղու միջոցներով Ասոր համար Հայաստանէն դատ ու-րիշ տեղ լուաղոյն օկուցեալութե-լիւն մը չկրնար լինիլ : Հայաստան ռազմագիտական և ուղարկաւարա-կան առնակներով յոյժ կարեւոր դատա-մ'է : Բարեւք վարչութեամբ, ինչպէս նաեւ Սուլթանին վեհապետութեան հետ համաձայն եղող Հայկական բաղ-ձանաց անկեղծօրէն ճանաչմամբ ու գործադրութեամբ, Հայաստան կրնայ պատուար մը լինիլ տէրութեան հա-մար : Իսկ ներկայ դրութեան շարու-նակութեամբն այդ դաւառը Ռուսա-կան մեքենայութեանց փառարան մը և Արտական Պաշտօնաւոր մը պիտի լի-նի : Բաղմաթիւն Հայեր կան, որք ար-դէն իրենք զիրենք փարչական կա-լով պաշտօնատար ցոյցած են, և ուրիշ բաղմաթիւն Հայեր ալ պատ-րաստ են հասարակային պաշտօն-ներու մէջ մտնել, բուսական է որ համալրել թէ կրնան Օսմանեան հոյ-րենապետներ լինիլ առանց հաւանու-թիւն տուած լինելու իրենց ազգակ-ցաց հարստահարութեանն ու կեղեք-ման : Հայաստանի երկրագործական ուղիւններն, յորոց մի միայն քանի մը գիւղացի բուսակաւք և անխիղճ պաշ-տօնատար օգուտ կը քաղեն այժմ, Հայոց բնական աշխատանքութեամբ և ճարտարմտութեամբ շուտով կը դարձանան, եթէ տանք անգամ մ'ապահովին տրոց հաւաքիչներուն յախշտակութեանց և Գրեաց ու Չերքէզաց աւաղակութեանց դէմ :

«Պէտք եղած բարենորոգմանք բազմաթիւ չեն, և հիմնական դըժ-ւարութեանց չեն բաղկիր, ըստ ու-րում այդ բարենորոգմանց ամենն ալ սկզբամբ ընդունուած և արդէն տէրութեան ուրիշ մասանց մէջ գոր-ծադրուած բաներ են : Տեղական աղ-գային զինուորութիւն մը, ինչպէս ի Լիւքսման, յորում՝ զինուորական ծառայութիւնը պարտաւորիչ պիտի լինի հարկաւ, հասարակային ապահա-վութիւնը կը վերահաստատուէ, օտար յարձակման ժամանակ երկրին պաշտա-պանութեանը պարտաւորութիւնն այս հոգեւորէն ազատելով՝ Պէտքէլաթը Աս-քէրէյէն արոց ջնջման դէմ փոխարի-նութիւն մը կը լինի :

«Տրոց ուղղակի կառավարութեան կողմէ հաւաքումն, և ոչխարաց տուրքին վերաբնութիւնն, այնպէս որ այդ տուրքն ոչխարաց գնոյն հա-մամա փոխարինակ լինի, երկրա-գործներն ու դաւարաւորները տը-րոց հաւաքիչներուն կեղեքումներ-րէն կ'ազատէ : Կաշառակուլ և ան-կարող բազում Մէճլիսներու տեղ, Գրիստոնեայներէ և Խալապիներէ խա-ռնն, պարկեշտ, ձեռնհաս և լաւ թոշակ ընդունող քանի մը դատա-րանաց հաստատութիւնն, և Եւրո-պիոյ Անգլիոյ կառուած արտաքոյ կարգի առնակը նման տեղէ տեղ փոխադ-րուող առնակն հաստատութիւնն, որք տեղական զեղծումները քննե-լու պաշտօն կ'ունենան, — հաւայս օրինակ տնօրէնութիւնը, արդա-րութեան վրայ ժողովրդեան վրաստ-հութիւնը կը վերահաստատեն, և այ-սոր անպարտժ մնացող շարութեանց առաջը կ'առնուն : Այս առնակն, Գրիստոնեայ անդամաց հետ Գրիստ-տոնեայ նախագահ մ'ալ կամ դեր-նախագահ մը պէտք է ունենան օ-րինաց առջև խաւած և Գրիստոնեայ վիայից հաւատարմութիւնն ստանա-վելու համար : Վերջապէս, Գրիստոն-եայք վարչութեան բարձր պաշտա-մանց կրնան կոչուիլ, և ինչ ինչ պաշտօններ ալ մի միայն անոնց պէտք է վերապահուին :

«Այս և նմանօրինակ բարեկար-գական անօրէնութեանց դէմ որ և է իրաւացի կամ հիմնական առարկու-թիւն չկրնար լինիլ : Եթէ Բ. Դու-ռնն անգամ մ'այս տնօրէնութիւն-ներն ի գործ դնէ, եթէ կարողու-թիւնն, անկողնակալութիւնն և առ-Սուլթանն անձնութիւնն յայտ-նի եղող (Վերանստու կառավարիչ) Բուսթիմ փաշայի նման Գրիստոնեայ կառավարիչ մ'այս բարենորոգում-ներն ի գործ դնելու պաշտօն բա-տանայ Ն. Կ. վեհապետութեան, վեհ. Սուլթանն յայնժամ իւր երկու միլիան Հայ հայատակաց անդրդու-լի հաւատարմութիւնն ապահոված կը լինի, բերդերէ ու բանակներէ աւելի հզօր պատուար մը քաշած կը լինի օտար յարձակման դէմ, նը-պատաւոր պարագայիցները փորձ մ'ըրած կը լինի, որ երբ յաջողի, տէրութեան միւս դաւառաց ալ կըր-նայ տարածուիլ, և վաղ կամ ան-գամ գործադրելու պարտաւորու-թիւն միջազգային ծանր պարտակա-նութիւն մը գործադրած լինելու գոհութիւնը կ'ունենայ : Միայն այս պիտի միջոցներով է որ կառավարու-թիւնն Հայաստանի ինքնօրինութիւն տալու հարկին առաջը կրնայ առ-նուլ, Հայրենասէր թուրք նախա-րար մը բնաւ չկրնար վարանիլ, երբ ինդիք է՝ կամ այժմէն ինչ ինչ առնանձնաշնորհումներ տալ արժանի և հաւատարմ ժողովրդոց՝ իբրեւ կայսերական հնորէք, և կամ յետոյ ինքնօրինութիւն մը, զոր Բ. Դուռը կամայ տակամայ տալու պիտի պարտա-ւորի օտար գիւղանաղիտութեան ճնշմանը ներքեւ :

ՀՆՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Յայտարար հասած հետաքրք-րելի

Բեղրապոլի 14 ապրիլ : Բուսիա գիտութեան բանակ մը կը զրկէ Չինաստանի սահմանագիտին և տասներկու չափ ալ մարտանաւ 21-նաստանի ջուրերը :

Մատրիտ 14 ապրիլ : Թաղաւորին կեանքը դաւելու փորձ ընող Օթէրօ այսօր գլխատեցաւ :

Փարիզ 14 ապրիլ : Պ. Տը Պէրսինէն Գաղղիոյ արտաքին աշխարհավարութիւնը բացատրող չըժա-բերական մը պիտի զրկէ մօտ օրէն :

Նոտրա 14 ապրիլ : Ստուգուած է որ Պիքսնֆիլտի նա-խարարութիւնը Թաղաւորին Անգլիա վե-րադառնալէն յետոյ հրաժարական պիտի տայ :

Գահիրէն կը հեռագրեն Աթանաթար լրագրին թէ Նախարարաց խորհուրդն ու-րոյեց Կարմիր ծովուն եղեքը զրաւել մինչև Կարտաքինի հրաւանդան, և թէ այս նպատակաւ Ալի Ռիազ փաշան այն երկրին կառավարիչ անուանեցաւ :

Նաօրէն կը հեռագրեն յիշեալ լրագ-րին թէ Ռօպէրթս զօրավարն յայտարա-րեք է Աթլանայ գլխներուն ժողովին թէ Անգլիոյ բարեկամ Էմիր մ'ընտրելու մասին համաձայնութիւն գործադրուելու պէս՝ Անգլիական զօրքը պիտի մեկնի Աթլա-նայտանէն :

Լոնտրա 14 ապրիլ .	
Օտ. Բոն. 10 5/8	
Փոխ. 1863 11 3/4	
» 1869 11 1/4	
» 1871 63	
» 1872 18 1/2	
» 1873 10 7/8	
» Եղիպա. 89 3/4	
Յ. Գ. Բոն. 99	

Փարիզ 14 ապրիլ .	
Օտ. Բոն. 10.83	
» Երկաթուղի 57, 80	
Գաղղ. » 50/0 119.57 1/2	
» » 50/0 Նոր 83.27 1/2	

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Երէկ իրիկուն Բարձր Սոյիտ փաշան, Մահմուտ Նէտիմ փաշան, Խոյրէտ-տին փաշան Ղազի Օսման փաշան և Սուպիի փաշան դարձեալ Երըրդի պալատն ի խորհուրդ գումարեցան ընդ նախագահութեամբ վեհ. Սուլ-թանին :

Կ. Պոլսոյ գլխաւոր պանքաներն, ինչպէս են Օսմանեան պանքա, Սո-սիէթէ Ժէնէրալ, Սոսիէթէ Խը Շանժ, Գրէտի Լիօնէ Խը, առջի օրն իրենց Պաշտատ նստող թղթակիցներէն հա-մամատ հեռագրեր ստացան, որք անյապաղ օգնութիւն կը խնդրեն Միջազգային թշուառ բնակիչներուն համար, որք անօթութենէ կը մեռ-նին :

Մայրաքաղաքիս Ռուսական դոր-ժակատար Պ. Օնու երէկ ծանուցա-գիր մը զրկեց առ Բ. Դուռն խնդրելով որ Գիւմէրաւ գնդապետն սպաննող վէշի Մէհմէմէտի դէմ դատաւիճիւն անմիջապէս տրուի : Պ. Օնու կը յայ-տարարէ թէ Բ. Դուռը պատասխա-նատու պիտի բռնէ բոլոր այն հե-տեանաց համար, որք այս գործին մէջ տեսնուած դանդաղութենէն կըր-նան ծագիլ :

Միջերկրական Անգլիական նա-ւատորմին հրամանատար Սըր Պոլան Սէյմուր ծովապետն, որ Սըր Հօրն պիտի կը յաջորդէ, մայրաքաղաքս ե-կաւ և Անգլիական դեսպանատունն հիւր եղաւ : Անգլիացի հրամանա-տարն Արեւելից նաւահանգիստներն աչքէ կ'անցունէ : Սըր Հօրն Լէյքըտ այսօր վեհ.

Սուլթանին պիտի ներկայացնէ Սէյ-մուր ծովապետը :

Անատոլի Անգլիական ընդհա-նուր հիւպատոս Ուիլյոնս գնդապետը Սեբաստիոպոլէն Կ. Պոլիս եկաւ մայրա-քաղաքիս Անգլիական դեսպանին հետ խորհրդակցելու :

Օսմանեան բանակին և կայսերա-կան պալատան ուսուստ և այլ պի-տոյք տուող փոճառականք, իրենց առնելիքը կառավարութենէն պա-հանջելէ ձանձրացած, քանի մ'օր առաջ կառ.քերով կայսերական պա-լատը գնացին, և աղերսադիր մը ներ-կայեցին վեհ. Սուլթանին, որ գոր-ծը լրջօրէն ի նկատ առաւ : Կառա-վարութիւնը մէկ միլիոն ոսկւոյ մօտ գումար մը կը պարտի անոնց :

Շքօտրայի նահանգին մէջ սովու-նչաններ տեսնուած են, և Ռաիօրի-ցայի գաղթականներէն շատ մարդիկ անօթութենէ մեռեր են :

Մակեդոնիոյ հոչակաւոր առա-դակապետ Բօնիօթի անուն Անգ-լիացի հպատակ երեւելի Յոյն մը նա-մակ զրկելով իմացուցեր են որ եթէ 2500 ոսկի չվճարէ, իւր կալուածը պիտի քանդեն : Պ. Բօնիօթի այս իրողութիւնն Անգլիոյ ընդհանուր հիւպատոսին խնայուց, և կըսուի թէ վերջերս Սէլանիկ զրկուած դ-րաց մէկ մասն այդ կալուածը պիտի պահպանեն եղեր :

Այսօր վէշի կամ Տէլի Մէհմէտի խնդրոյն համար բժշկաց ժողովը վե-րըստին պիտի դումարի թիւղանօթա-րանի պաշտօնատուներ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
Երէկ իրիկուն գոցուեցաւ	11.29
Յայտարարութեան քուցուեցաւ	11.23
Կէս օրին	11.22
Բուսիսի երկաթուղի	Փո. 36
Քոյիթ աղբար	Փո. 940
Քրտանայ	Օտ. լիւր. 3.60

ԸՆԹԱԾԻ ԱՐՃԵՂԹՈՑ

2 Ապրիլ	
Սոսիէթէ Ժէնէրալի բաժ. Անգլ. լիւր. 4.19	
» ֆոնանտակութեան » 3.5	
Կ. Պոլսոյ Պանքային » 6.16	
Բրէտի ֆէնէրալ » 3.30	
Փոխ. 1863 36 56	
» 1865 » 57	
» 1869 » 56 25	
» 1872 » 18 3/4	
» 1873 » 52 50	

ԸՆԹԱԾԻ ԳՐԱՄՈՑ

3 Ապրիլ	
Յ. Գ. Բոն. 110 42	
Նաւալան սակի » 87 38	
Խմելու խալ » 90 26	
Ռուսական թղթաւոր 8 րոյ. 51 20	
Քրտանայ » 51 20	
Մէհմէտի տարբերութիւն » 7 12	
Նիւրի լոյս » 210 20	
Մէհմէտ » 216 20	
Պիւնձ » 340	
Յ. փարանոց » 330	

Ա. Գ. Ա. Ս. Ի. Ն.

Խնուսերբոյն Պատրիարքարան եկած գրութիւն մը հետեւեալը կը ծանուցանէ : Յիշեալ գիւղաքաղաքէն հինգ ժամ հեռաւորութիւն ունեցող Խօզլու

գիւղի ղեկեալ Թուրք գաղթականք
կէս ժամ հետի Նէնիքէյ անուն հա-
յաբնակ գիւղին վրայ գիւղեանցյալը
ձակելով՝ բնակիչներն սպաննել և նու-
յա ինչքերն յաղթականելու վորձ
վորձեր են. բայց գիւղին բնակիչները
բարեբաղդաբար միացեր և երեք
ժամ կռուելով՝ արևարար գիւղերը
և հրոսակներն հալածելու յաջողեր են։

Խնուսերը գիւղի այս իրողութիւնը
ծանուցանելով՝ կը հարցնեն թէ ի-
րենց և ընտանեաց կեանքն, ինչ-
քն ու պատիւը պաշտպանելու հա-
մար զինեալ գիւղերու թիւին ըստ
օրինի իրենց յանցանք կրնայ հա-
մարուիլ. վասն զի, կրնան, երբ քը-
րիստոնեայ մը Թուրքի կամ Բուրքի
գէտ ինքզինք պաշտպանած պահուն՝
եթէ իւր թշնամին վիրաւորէ կամ
սպաննէ, իւր սնրագործ՝ ամենախիստ
պատժույ կ'ենթարկի. իսկ եթէ վի-
րաւորեալը կամ սպանեալը քրիստոն-
եայ լինի, Թուրքը կամ Բուրքը ան-
պատժ կը մնայ։

Մեր թէպէտ չեմք գիտեր թէ Ս.
Պատրիարքն այս հարցման ինչ պա-
տասիրան տուեր է, բայց մեր գիտցա-
ծըն այս է որ ինքնապաշտպանութիւ-
նըն ըստ օրինի և ոչ տեղ մ'արգիլ-
ւած է, վասն զի, ինչպէս որ մարդ-
ամուսնանալու, ընտանեաց և դաւա-
կաց հայր լինելու, գոյից և ըն-
չից տէր լինելու, ուղած կրօնքը
պաշտելու, ուղած տեղը բնակելու և
հաւնած արհեստը բանելու իրաւուն-
քն ունի, այսպէս ալ թշնամեաց
գէտ, մանաւանդ աստիկանութիւն
չդառնաւ տեղն ինքզինք և իւր ըն-
տանիքը պատիւն ու ինչքը պաշտպա-
նականելու իրաւունքն ունի, զոր տէ-
րութեան օրէնքն, ինչպէս նաեւ ա-
մեն քաղաքակիրթ ազգաց օրէնքնե-
րը բացորոշապէս ճանչած ու հաստա-
տած են, հետեւաբար բնաւ տարակոյս
չկայ թէ ինքնապաշտպանութիւնն
ըստ օրինի իրաւունք է, արդարու-
թեան վրայ հիմնեալ անժխտելի ի-
րաւունք մը, զոր անխառնութիւնն
ու մտկոնքութիւնն երբեմն լու-
ծելու կը յանդգնին, ժողովրդաց տը-
կարութեան և մանաւանդ տղիտու-
թեան օգուտ քարելով։ Բայց այդ
անխառնութեանց առաջը գիւրա-
կաւունքի, եթէ տէրութեան օրէնքն
անսպառ գործադրութիւն գտնէ։

Ռուսական Կոյս լրագիրն հե-
տեւեալ լուրը կուտայ.

Կայսեր գահակալութեան 23 տմ
կայ տարեգարծին առթիւ Հայոց
Պատրիարքը մագաղաթի վրայ ձե-
ռագիր Աւետարան մ'ընծայեց Ն. Կ.
Վեհափառութեան։

Գիրքէն գտնելով, յիշեալ ձե-
ռագիրը ժի կամ ժԳ դարու գործ
է՝ բաղմաթիւ երգներանգ և սակե-
ղած նկարներով ու գիրքով զար-
դարուած ըստ այն ժամանակի սովո-
րութեան և անչույտ քանի մը տա-
րիներու անընդհատ աշխատութիւն
հարկ եղած է այնպիսի գործ մ'ի-
գլուի հանելու համար։

Ձեռագիրը փառաւոր կերպիւ
կաղմուած է Սանդիքօֆի գործու-
րաններուն մէջ, Կոզլին չորս անիւն-
ներն Հայաստանի գլխաւոր Սրբոց
պատկերներով զարդարուած են.
մէջ տեղը մեծ խաչ մը կայ՝ փրկին
չարչարանաց ամեն գործինեղով և ե-
կեղեցական իշխանութեան նշաննե-
րով։ Կոզլին կրնալը զարդարուած
է Լիմանի պատկերով, որ Հայաս-
տանի ամենէն հռչակաւոր վանքն և
Պատրիարքին աթոռանիստ բնա-
կավայրն է։ Կոզլին ներքի կողմն ար-
ծաթեայ թիթեղի մը վրայ արձանա-
գրեալ է։

“Ա. Ն. Վեհափառութեան Աւետար-
ն. Օգոստոսեան պաշտպան Հայաստանաց Ե-
կեղեցւոյ, Ն. Գեորգի Գ. Ե. Պատրիարք-Կոնստան-
տնէ Հայեան ազգին, 1885—1880”

ԿՐԹԱԿԱՆ

Հարկ չկայ ըսելու թէ ազգին նիւ-
թական բարոյական և մտաւորական
յառաջդիմութեան համար Թուրքի
մեծ կարեւորութիւն ունին մեր թա-
ղային վարժարաններն, որոց վիճակը
կարծուածէն շատ աւելի խեղճ է։ Վեր-
ջին տարն տարիներուն մէջ մեր թա-
ղային վարժարաններն ոչ միայն յա-
ռաջդիմած չեն, այլ զգալի կերպիւ
ես դնացած են։ Վարդաքակիրթ ազ-
գաց մէջ, որոց շաղկին հետեւելու
մեծ փափաք կը ցուցնեմք, դաւա-
տարակալութեան համար շարունակ
նորանոր կատարելագործութիւնը
կ'ատեղծուին ու կը գործադրին, և
մեր գրեթէ անփոյթ կը գտնուին ք-
աննցմէ օգուտ քարելու։

Ինչէքնան է ֆէնտի, որուն յանձ-
նուած էր իսկականաբար միացեալ վար-
ժարանաց ընդհ. տեսութիւնն, իւր
պաշտանէն հրաժարելով տեղեկագիր
մը կը ներկայէ Ազգ. Ռուսմանական
խորհրդոյ։ Յիշեալ տեղեկագիրը կը
պարունակէ իւր մէջ անպիսի կարե-
ւոր խորհրդածութիւններ ու տա-
լարկութիւններ ազգային կրթու-
թեան մասին, որ մեր իրեւ խմբա-
գիր և իրեւ փափաքող ազգային
կրթութեան բարեօրման և ազգա-
յին վարժարանաց բարեկարգու-
թեան, պարտք կը համարուի քնդ-
հանրապէս մեր ընթերցողաց և մաս-
նաւորապէս մեր բոլոր պաշտօնական
մարմնաց և անձանց խորին ու շաղկա-
թիւնը հրաւիրել անոր վրայ։ Կը յու-
սամք որ ազգային Երեսօխոսման
ժողովը և Կեդր. վարչութիւնն, ինչ-
պէս նաեւ Թաւ. Խորհուրդը և վար-
ժարանաց հոգաւարձութիւնը կը
փութան ազգային կրթութեան տը-
խուր վիճակին անյապաղ դարման
տանելու համար ամեն ջանք և հը-
նարք ի գործ դնել, քաջ գիտնալով
որ ազգային փրկութեան միակ անվը-
րէպ միջոցը ժամանակին պահանջած
հիմնական և կանոնաւոր կրթութիւ-
նն է։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ընդհանուր գեւըն Մեծեալ վարժարանաց
Իսկոնք

ՆԵ

Առաջարկութիւնը Ազգ. վարժարանաց
ընդհանուր բարեկարգութեան համար

Մեծապատիւ Առնապետ Ռու-
սմանական Խորհրդոյ Ազգ. Կեդրո-
սական վարչութեան։

Պատուարժան Խորհուրդ. 1879
Նոյեմբեր 4ին պաշտօնի կոչած էր զին
հետեւեալ գրութեամբ։

«Ռուսմանական Խորհրդոյ այսօր
իսկեւ տարի վարժարանաց միացեալ
Հոգաւարձութեան հետ Ս. Խաչի
վարժարանին Խորհրդարանը ըստ
նիստին մէջ որոշուեցաւ զԶեղ ընդ-
հանուր տեսուչ անուանել Ս. Խաչի
և Ս. Կարապետի թաղերու և իճա-
տիէի և Գուգիւնճուգի միացեալ
թաղի վարժարանաց։»

«... Կը խնդրեմք որ վաղը Մե-
ծապատիւ Գաւառի Եֆէնտի ճէվա-
հիճեանի փառաւանդը հրամայէք
պէտք եղած բանակցութիւնն ընե-
լու և Ձեր պաշտօնին սկսելու հա-
մար։»

Ճշգրիտ գործադրելի Պատուար-
ժան Խորհրդ. հրահանգը, բայց
գրեթէ առաջին օրէն տեսայ դար-

մացմամբ թէ միացեալ վարժարանաց
Հոգաւարձութիւնը գեւ ոչ բոլոր
լայկին կազմուած է, և ոչ օրինաւ
յապէս իր նիստերն սկսած։ Սակայն
Պատուարժան Խորհրդ. Խորհրդը
պատուի ձեռնարկութեանը իմ կող-
մէս բոլոր խաղկոյս Հայաստանեայ
համար նոյեմբեր 6ին գործի սկսայ
առանց որ և է որոշ պայման մը ու-
նենալու։

Նոյն օրը բոլոր վարժարանները
այցելելի պէտք եղած տեղեկութիւն-
ներն առնելու համար։

Ս. Խաչի վարժարանաց կողմէն
ընդգրկուած թիւն մը չտեսայ։ Ս. Կա-
րապետի ճեմարանն ալ ի սկզբան
գծաւարկութիւն չցուցայ։ Իսկ ի-
ճատիէի վարժարանի պաշտօնեայը
յայտնեցին թէ չեն կրնար միացեալ
Հոգաւարձութեան իրաւասութիւնը
ճանչնալ, վասն զի իճատիէի և Գու-
գիւնճուգի միացեալ թաղական Խոր-
հուրդը այդ վարժարանը պայմա-
նագրութեամբ մը իրենց՝ այսինքն
չորս գաւառացի անկախ տնտե-
սութեան յանձնած է 1879 հոկտեմ-
բեր 29է ի վեր։ Գուգիւնճուգ գը-
տայ ընտելարան մը 12 աշակերտով
և մէկ դաստիարակով օր ուղղակի
Թաւ. Խորհրդոյ հսկողութեան տակ
էր։

Ս. Կարապետի ճեմարանը թէ և
քանիցս խոստացաւ պահանջուած
տեղեկութիւնը տալ, բայց 7-8 օր
ետը յայտնեց թէ թաղ. Խորհուր-
դը պատուիրած է տեղեկութիւն
չտալ։ Սիկիլին էր երկանց, բայց
վերջապէս այդ և այդպիսի սկզբնա-
կան դժուարութիւնները յաղթե-
ւեցան։

Սրբ. ուրեմն նոյեմբերի կարծեմ
18ին Հոգաւարձութեան կազմու-
թիւնը ամբողջանալով սկսաւ իր նիս-
տերն ընել, և մեր պաշտօնին ուս-
մանն ու պայմանները գծուեցան։
Որոշուեցաւ Ս. որ նախ Ս. Կարապե-
տի և Ս. Խաչի վարժարանաց տես-
չութեանն ու քննութեանը զբաղին
և ապա իճատիէի. Բ. Միացեալ ու-
սումնարանի բազմ մը յանուարին ըս-
կիլը կատարուի. Գ. Միացեալ գե-
տեմերի վերջ վարժարանաց նիստ
կան մասնակարարութիւնը իւրաքան-
չիւր թաղի Թաւ. Խորհրդին վրայ
մնայ։

Ներկայեմ այժմ Պատուարժան
Խորհրդ. Ս. Կարապետի և Ս. Խա-
չի վարժարանաց վրայ ընդհանուր
տեսութիւն մը հանդերձ Խորհրդա-
ծութեամբ։

Ս. Խաչի վարժարանաց շէնքը,
ինչպէս յայտնի է, կառուցուած է
ջանիւք բարեկիցատու Յակոբ Պատ-
րիարքի։ Երանի թէ ամեն հըրա-
ժարեալ Պատրիարք այդ ձեռունդին
օրինակին հետեւէր։ Վարաշէն հա-
տատուն չենք մ'է, բայց շինուելն
ի վեր նորագութեան երես չէ տե-
սած։ Ասիական սովորութիւններէն
մին է բան մը շինել և յետոյ բնաւ
հող չտանել անոր պահպանութեա-
նը մինչև որ բոլորովին քանդուի։
Մեր մէջ թէ և չէ հասկցուած գեւ-
թէ վարժարանները իրենց յատուկ
ճարտարապետութիւնն ունին և մէկ
երկու խցիկներով մեծ սրահ մը կա-
տարեալ վարժարան կը նկատուի,
բայց այսու ամենայնիւ այս շէնքը
Պոլսոյ թաղային վարժարանաց յար-
մարագոյններէն մին է։ — Սիկիլանց
և տղայաց վերի սրահներու գրասե-
ղանները բաւական լաւ վիճակի մէջ
են թէ և գիտութեան արդի պա-
հանջմանց չեն համապատասխաներ,
իսկ վարի սրահներու գրասեղանե-
րը անպիսի են։ — Ռուսմանց օժան-

դակ միջոցներէ քանի մը աշխարհա-
ցոյց տալու և մէկ երկու գունա-
միայն կը գտնուի։ Կան դասեր ու-
րանք անոնց օժանդակ միջոցներու
չեն կարողարդ խնամք ըլլալ. բայց
այս համարութիւնը անհասկալի
է քնդհանրապէս մեր թաղականաց,
հողաբարձուաց և վարժարանաց
մեծագոյն մասին։

Ճեմարանի շէնքը, որ շատ ըն-
դարձակ է, բարբոսին խաբուել վի-
ճակի մէջ կը գտնուի և բնաւ վար-
ժարանի կերպարանք չունի։ Շէն-
քին վարի յարկը բոլորովին տեսակ
դարձած է, և աւելի մարդիկ քան
գեր են զայն քան թէ ժամանակը։
Առած տեղեկութիւններուս նայե-
լով այդ շէնքը հետզհետէ քանդ-
ուելով նիսթը ուրիշ շինութեանց
գործածուելը է։ Ձմեռը՝ սրահը,
գաւառաններն ու սեղանատուներն
տանելի են. ամէն կողմէն հարկաւա-
ւոր ծակեր և ճեղքեր կան, աշա-
կերտը տաքնալու համար ստիպ-
ուած են վառարանաց բոլորակը
խաւուիլ։ Մէկ միջոց կայ այդ տը-
խուր վիճակին դարձան տանելու.
չէնքը ամբողջովին քանդուել և անոր
նիսթով վաւր շէնք մը շինել որ քիչ
ծախքով կրնայ ըլլալ։ — Գաղով գը-
րասեղաններուն, չկայ հատ մը որ
սկիւնի ըլլալ։ — Օժանդակ միջոց-
ներն են. քանի մը Հայերէն աշխար-
հացոյց տալու և, գունաւ մը, ի-
րադիտութեան պատկերը և երկրա-
չափական մարմինը։ Բացի աշխար-
հացոյցներէն, միւսները, որք կար-
ծեմ Ռուստատունէն ընծայ խրկուած
են, չեն գործածուիր, վասն զի զա-
նանք գործածելու ընդունակ դա-
սաւոր կը պակսի։ —

Ներքին վեհա վարժարանաց

Ս. Խաչ Սէլամիէ

Պաշտօնի անցած միջոցիւ ողջը-
կանց վարժարանը կար 100 աշակեր-
տաւ հի հետեւեալ կերպով բաժնը-
ուած։

Ռուսմանարան Գ.	3
» Գ.	40
» Բ.	11
» Ա.	24

Ծաղկոց 82 աշակերտուհի։

Կաւանդուէին Հայերէն, Գաղղի-
երէն (Գ. Գ. Բ. կարգաց) Թուրա-
նու թիւն, Աշխարհագրութիւն (Գ.
Գ.) Ընդհ. Պատմութիւն (Գ.) Սղդ.
Պատմութիւն, Ս. Պատմութիւն և
Գրիտունեական (Գ. Բ. Ա.) Գըծագ-
րութիւն (Գ. Գ. Բ.) ձեռագործ։

Կաւանդուէր դաս չարաթը.
Գ. կարգին 12 1/2 ժամ.
Գ. » 15 »
Բ. » 18 »
Ա. » 17 »

Գ. Գ. Բ. կարգի աշակերտուհեաց
սմանց դաշնակ 3 ժամ, երգ 1 ժամ
Ծաղկոցը յանձնուած էր մէկ
վարժուհւոյ որ կուսուցանէր կար-
գալ գրել և թուանշանը։ —

Տղայոց վարժարանը կար 111 ա-
շակերտ։

Ռուսմանարան Գ.	11
» Բ.	14
» Ա.	27
Նախակրթարան	24

Ծաղկոց 33 աշակերտ։

Կաւանդուէին Հայերէն, Գաղղի-
երէն և Տաճկերէն (Գ. Բ.) Թուրա-
նու թիւն, Աշխարհագրութիւն (Գ.
Ա. Բ. կարգը չունէր) Գըծագ-
րութիւն, Սղդ. Պատմութիւն, Ս.
Պատմութիւն, Գրիտունեական և ձայ-
նաւորութիւն. նախակրթարանին
Հայերէն, Թուրքական թիւն և գիր։
(Շարունակել)

ԽՄԲԱԳ.ԻՐ—ՏՆՈՐԷՆ
Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ